թիւնը աւելի իմ կողմի՞ց էր, թէ նրա կողմից, — չեմ յիշում, միայն երկուսիս լեզուն էլ պապանձած էր: Ես չգիտէի, ինչ խօսել նրա հետ, դրա համար շատ ուրախացայ, երբ Մարօն իր հեռանալով դուրս բերեց ինձ իմ նեղ դրութիւնից: Ես այն ժամանակ միայն զգացի իմ անշնորհքութիւնը, թէ ո՛ր աստիճան անկիրթ էի, թէ որքան կոշտ եւ կոպիտ պատրաստել էր ինձ դպրոցը:

Տղերքը հաւաքուեցան ընթրիքի սեղանի շուրջը: Աւօն նոյնպէս նստեց մեզ մօտ: Մարօն սպասաւորութիւն էր անում, անդադար ուտելիքներ եւ ըմպելիքներ ներս բերելով եւ դուրս տանելով: Երեւում էր, որ տանուտէրը առաջուց գիտէր իր հիւրերի գալուստը եւ կանխապէս պատրաստութիւններ էր տեսել նրանց համար: Գիւղական ամէն տեսակ բարիքներից, ինչ որ կարող է մատակարարել երկրագործի եւ խաշնարածի տնտեսութիւնը, գտնւում էր սեղանի վրայ:

Ընթրիքի ժամանակ ես դեռ նոր զննեցի ծերունի որսորդի, խորշոմներով պատած դէմքը, նրա գլխի եւ մօրուքի ալեւորած մազերը, որոնք առաջ, իմ տեսած ժամանակը, բոլորովին թուխ էին, իսկ այժմ այն երկաթի մարդը ծերացել, շատ եւ շատ փոխուել էր: Նա պահպանել էր միայն իր վաղեմի աշխոյժը, եռանդի կենդանութիւնը եւ հոգու ազնուութիւնը, որպէս մի բոյս, որ թառամած, ցամաքած դրութեան մէջ եւս պահպանում է իր անուշահոտութիւնը:

— Ֆարհատ, — ասաց նա ինձ, — երբ առաւօտեան լոյսը կը ծագի, կասեմ Մարոյին քեզ տանէ մեր լեռների վրայ ման ածէ, եւ դու կը տեսնես, թէ որքա՜ն գեղեցիկ են մեր լեռները:

Իմ սիրտը թնդաց ուրախութիւնից, ես շատ էի սիրում լեռը. որպէս դաշտային երկրի բնակիչ, լեռը միշտ ինձ վրայ մի առանձին դիւթական տպաւորութիւն էր գործում: Բայց իմ ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ, երբ մտածում էի, թէ Մարօն պիտի առաջնորդէ ինձ իմ լեռնային զբօսանքի ժամանակ: Ա՜խ, ե՜րբ պիտի լուսանար այդ գեղեցիկ առաւօտը: Համոզուած էի, որ Մարօն երկար պիտի խոսէր ինձ հետ, շատ բանէր պիտի հարցնէր քոյրերիս մասին, մօրս մասին, իր բոլոր հին ծանօթների մասին: Բայց դեռ բաւական ժամանակ կար մինչեւ առաւօտը. աքաղաղները դեռ նոր էին սկսել երկրորդ անգամ կանչել:

Կ. գիւղը, ուր բնակւում էր ծերունի որսորդը, գտնւում էր Դուշմանայ լեռների վրայ, որոնք կազմում էին մի շղթայ, որ բաժանում էլ Սալմաստը Հաղբակից: Վասպուրականի սարօտ գաւառներից մէկն է Հաղբակը, որ իր երկարատեւ ձմեռով եւ հովասուն ամառով, թէեւ աւելի յարմարութիւն չունի երկրագործութեան, բայց իր խոտաւէտ արօտներով խիստ նպաստաւոր է